

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՆՑԱԿԻՑՆԵՐԻ՝ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՍՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՍՈ ՍՈՎԱՄԱՅԱՆ

Յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրներից է հանցավորության դեմ արդյունավետ պայքարի իրականացումը, որը հնարավոր է ոչ միայն քրեաիրավական հարկադրանքի, այլև խրախուսական բնույթի նորմերի կիրառմամբ: Վերջիններիս շարքին են դասվում նաև հանցանքը կատարելուց կանոփին հրաժարվելու ինստիտուտը կանոնակարգող դրույթները:

Հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտը նախատեսված է բազմաթիվ երկրների քրեաիրավական համակարգերում: Մասնավորապես, Շվեդիայի¹, Ուկրաինայի², ՌԴ-ի³ քրեական օրենսդրությունը այն դիտում է որպես քրեական պատասխանատվությունը բացառող, Գերմանիայի⁴, Շվեյցարիայի⁵ օրենսդրությունը՝ պատժից ազատելու հիմք, մինչդեռ ճապոնիայի⁶ օրենսդրության համաձայն՝ հանցանքը կատարելուց կանոփին հրաժարվելը պետք է հաշվի առնվի պատիժ նշանակելու ժամանակ՝ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: ՀՀ-ում այս ինստիտուտը ևս նախատեսված է, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 36 հոդվածը սահմանում է.

«1. Հանցագործությունից կանոփին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:

2. Հանցագործությունն ավարտին հասցնելուց կանոփին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա՝ փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

3. Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կանոփին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը:

¹ Տե՛ս "Уголовный кодекс Швеции". СПб., 2001:

² Տե՛ս "Уголовный кодекс Украины. Научно-практический комментарий УК Украины". М., 2010:

³ Տե՛ս "Уголовный кодекс Российской Федерации". М., 2007:

⁴ Տե՛ս "Уголовный кодекс ФРГ". М., 2000:

⁵ Տե՛ս "Уголовный кодекс Швейцарии". СПб., 2002:

⁶ Տե՛ս "Уголовный кодекс Японии". СПб., 2002:

4. Եթե սույն հոդվածի երրորդ մասում նշված գործողությունները չեն հանգեցրել կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները պատիժ նշանակելիս կարող են հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»:

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ ներկայացված դրույթներով օրենսդիրը հստակ կանոնակարգում է ինչպես կատարողի, այնպես էլ կազմակերպիչի, դրդիչի, օժանդակողի կամովին հրաժարվելու հիմնահարցերը:

Այնուհանդերձ, առաջին իսկ խնդիրը, որը ծագում է, վերաբերում է համակատարողի կամովին հրաժարվելու առանձնահատկություններին:

ՀՀ քրեական օրենսգրքի 38 հոդվածի մասում, ներկայացնելով կատարողի հասկացությունը, օրենսդիրը նշում է. «Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզուլությանը»:

Ներկայացված դրույթի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը «կատարող» և «համակատարող» հասկացությունների միջև տարբերություն չի դնում, ինչից էլ հետևում է, որ հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը կիրառելիս նա համակատարողի համար նախատեսում է հանցագործությունից հրաժարվելու նույն պայմանները, ինչ և կատարողի համար: Ստացվում է, որ եթե համակատարողը, գիտակցելով հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը, կամովին դադարեցնում է հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Ներկայացված լուծումն, անշուշտ, ընդունելի է այն իրավիճակներում, երբ համակատարողի կողմից հանցանքի կատարմանն ուղղված գործողության կամ անգործության դադարեցմամբ հանցագործությունն ընդհատվում է և ավարտին չի հասցվում: Օրինակ՝ գողություն կատարելու նպատակով միավորված համակատարողները միմյանց միջև հստակ բաշխել են գործառույթները. նրանցից մեկը բնակարանի դուռն է բացելու, մյուսը՝ տեղափոխելու է գողոնը: Ներկայացված օրինակում համակատարողներից առաջինի կամովին հրաժարումը հանգեցնում է նաև երկրորդ համակատարողի հանցավոր վարքագծի խափանման, հետևաբար՝ առաջին համակատարողի կամովին հրաժարվելու պարագայում նրան քրեական պատասխանատվությունից ազատելը լիովին արդարացված է:

Սակայն որքանով է հիմնավորված ՀՀ օրենսդրի կողմից առաջարկված լուծումն այն իրավիճակներում, երբ հանցագործության օբյեկտիվ կողմը կատարվում է երկու կամ ավելի համակատարողների կողմից, նրանցից մեկը կամովին հրաժարվում է հանցագործությունն ավարտին հասցնելուց, սակայն մյուս համակատարողը (համակատարողները) հանցագործությունը հասցնում է ավարտին: Օրինակ՝ երկու համակատարողներ միավորվել են սպանություն կատարելու համար, ընդ որում, իրենց

ծրագրի համաձայն, նրանցից մեկը պետք է բարձով խեղդամահ աներ տուժողին, մյուսը դաշույնով հարվածեր: Հանցագործության վայր ժամանելուց հետո նրանցից մեկը հրաժարվում է հանցանքը կատարելուց և հեռանում, մինչդեռ մյուսը կյանքից զրկում է տուժողին:

Նման պարագայում առաջին համակատարողին կամովին հրաժարվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը, մեր կարծիքով, փաստացի խախտում է հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի կիրառման տրամաբանությունն ու առաքելությունը:

Կամ որքանով հիմնավորված կլինի քննարկվող դրույթի կիրառումը այն դեպքերում, երբ հանցանքի կատարումից կամովին հրաժարվում է այն համակատարողը, ով ինքն է մյուս համակատարողի մեջ առաջացրել հանցանք կատարելու մտադրությունը, ներգրավել է վերջինիս հանցանքի կատարման, բայց հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով փաստացի ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Կարծում ենք, որ ՀՀ օրենսդիրը պետք է առավել հստակ կանոնակարգի հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները: Նախևառաջ ՀՀ քրեական օրենսգրքում առանձին դրույթներով պետք է կանոնակարգվեն համակատարողների՝ հանցագործությունից կամովին հրաժարվելուն ներկայացվող պահանջները: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 36 հոդվածում պետք է նախատեսվի հետևյալ բովանդակությամբ դրույթ. «Հանցագործության համակատարողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա կողմից հանցանքը կատարելուց կամովին հրաժարվելու դեպքում հանցագործությունն ավարտին չի հասցվում: Եթե հանցագործության համակատարողի կողմից իր արարքը կամովին և վերջնականապես դադարեցնելու դեպքում հանցագործությունը այլ համակատարողների կողմից ավարտին է հասցվում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմիններին ժամանակին հայտնելով՝ փորձել է կանխել հանցակիցների կողմից հանցանքը ավարտին հասցնելը»:

Հարցի գրեթե նման լուծման տարբերակ առաջարկված է Գերմանիայի քրեական օրենսգրքի պարագրաֆ 24-ում, որը սահմանում է.

«1. Հանցափորձի համար պատժի չի ենթարկվում նա, ով կամովին հրաժարվում է արարքի հետագա կատարումից կամ խոչընդոտում է այն ավարտին հասցնելը: Եթե արարքը առանց նրա աջակցության էլ հասցվում է ավարտին, ապա անձը պատժի չի ենթարկվում, եթե կամովին և հետևողական ջանքեր է գործադրել արարքը ավարտին հասցնելը կանխելու համար:

2. Եթե արարքը կատարվում է մի քանի անձանց կողմից, ապա հանցափորձի համար չի պատժվում նա, ով կամովին խոչընդոտում է արարքը ավարտին հասցնելը: Եթե արարքը առանց նրա աջակցության կամ նախկինում նրա աջակցությամբ հասցվում է ավարտին, ապա անձը պատժի չի ենթարկվում, եթե կամովին և հետևողական ջանքեր է գործադրել արարքը ավարտին հասցնելը կանխելու համար»⁷:

Համակատարողների կամովին հրաժարվելու առանձնահատկություն-

⁷ "Уголовный кодекс ФРГ". М., 2000.

ների հստակ կանոնակարգումը կարևորվել է նաև գիտական գրականության մեջ: Մասնավորապես, Ա. Ա. Կյուևը, Ա. Ա. Շակիրովան նշում են, որ համակատարողի կամուրջին հրաժարման կանոնակարգումը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչ խմբի կազմում է նա գործում, և հանցակցության ինչ ձև է առկա: Ա. Ա. Շակիրովայի կարծիքով, հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կատարվելու դեպքում կատարողը (համակատարողը) ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա կանխում է այդ խմբի այլ մասնակիցների կողմից հանցանքն ավարտին հասցնելը⁸: Համանման տեսակետ է արտահայտել նաև Ա. Ա. Կյուևը⁹:

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում կազմակերպիչի, օժանդակողի և դրդիչի կամուրջին հրաժարմանը ներկայացվող պահանջները:

ՀՀ քրեական օրենսգրքի 36 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի ձևակերպումներից հետևում է, որ նշված անձինք ենթակա չեն քրեական պատասխանատվության, եթե պետական մարմիններին հայտնելով կամ անձամբ ձեռնարկած միջոցառումներով կանխել են հանցագործությունն ավարտին հասցնելը: Հակառակ պարագայում նրանց նման վարքագիծը կարող է հաշվի առնվել պատիժը նշանակելիս՝ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Ասվածից հետևում է, որ կազմակերպիչի, օժանդակողի, դրդիչի կամուրջին հրաժարվելը հնարավոր է՝

1. միայն նրանց ակտիվ վարքագծի պարագայում,

2. պետական մարմիններին հայտնելով կամ անձամբ ձեռնարկած միջոցառումներով հանցագործությունն ավարտին հասցնելը կանխելու դեպքում:

Հարց է ծագում. ինչպե՞ս վարվել այն դեպքերում, երբ դրդիչը, կազմակերպիչը կամ օժանդակողը նախապատրաստված հանցագործության մասին ժամանակին հաղորդել են իրավապահ մարմիններին, սակայն վերջիններին անտարբերության կամ ուշ արձագանքման պատճառով հնարավոր չի եղել կանխել հանցագործությունն ավարտին հասցնելը: Որքանով է հիմնավորված այդ դեպքում կազմակերպիչին, դրդիչին կամ օժանդակողին քրեական պատասխանատվության ենթարկելը:

Կ. Ա. Պանկոյի կարծիքով. «Կազմակերպիչի կամ դրդիչի կողմից իրենց կազմակերպչական գործունեության կամ դրդչության ակտից հետո կամուրջին հրաժարվելը թեև վկայում է դրդիչի և կազմակերպիչի հանրային վտանգավորության վերացման կամ նվազման մասին, սակայն բնավ չի նշանակում, որ նրանց կողմից մինչ այդ կատարված արարքները դադարել են հանրորեն վտանգավոր լինելուց, քանի որ դրանք պատճառական կապի մեջ են գտնվում կատարողի հանցավոր վարքագծի հետ: Ուստի դրդիչի և կազմակերպիչի միայն ակտիվ վարքագիծը, որը կհանգեցնի կատարողի կողմից հանցանքը ավարտին հասցնելու մտադրության խա-

⁸ Ст'я Шакирова А. А. Добровольный отказ от преступления соучастников. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Красноярск, 2006.

⁹ Ст'я Клюев А. А. Особенности добровольного отказа от совершения преступления в неоконченном посягательстве и в соучастии. Краснодар, 2003:

փանճան, կկանխի հանցագործությունը, կարող է չեզոքացնել նրանց փաստացի կատարած արարքների հանրային վտանգավորությունը, դիտարկվել որպես հանցագործությունից կանոսկին հրաժարում և կազմակերպիչի ու դրդիչի քրեական պատասխանատվության բացառման հիմք հանդիսանալ»¹⁰:

Ն. Ֆ. Կուզնեցովան արտահայտել է հակառակ տեսակետ, նշելով, որ եթե դրդիչը, կազմակերպիչը ժամանակին տեղեկացրել են իրավասու մարմիններին նախապատրաստվող հանցագործության մասին, սակայն կատարողին հաջողվել է հանցագործությունը հասցնել ավարտին, կազմակերպիչի կամ դրդիչի արարքները պետք է գնահատվեն որպես հանցագործությունից կանոսկին հրաժարում¹¹:

Համանման կարծիք են արտահայտել Ս. Բ. Պանկրատովը և Վ. Պիտեցկին: Վերջիններիս կարծիքով, կազմակերպիչը և դրդիչը պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից, եթե նրանք իրավասու մարմիններին ժամանակին հաղորդել են նախապատրաստվող հանցագործության մասին, սակայն վերջիններիս դանդաղկոտության հետևանքով հանցագործությունը հասցվել է ավարտին: Նույն մոտեցումը պետք է դրսևորել նաև այն դեպքերում, երբ կազմակերպիչը, դրդիչը իրենց հետևողական ջանքերով փորձել են կանխել հանցագործությունը, սակայն կատարողը ծրագրվածից ավելի վաղ է իրականացրել հանցագործությունը կամ ինքնազուխ փոփոխության է ենթարկել հանցագործության ծրագիրը¹²:

Մեր կարծիքով ևս, կազմակերպիչի, դրդիչի կողմից հանցագործությունից կանոսկին հրաժարում պետք է դիտել այն իրավիճակները, երբ նրանք իրավասու մարմիններին ժամանակին հայտնել են նախապատրաստված հանցագործության մասին, սակայն վերջիններիս անփութության, անտարբերության հետևանքով հանցագործությունը հնարավոր չի եղել կանխել: Այլ խնդիր է, որ գործնականում բավականին խնդրահարույց է լինելու «ժամանակին» հասկացության գնահատումը: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Պիտեցկին, «ժամանակին» հասկացությունը արժևորվող կատեգորիա է և պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ գործի բոլոր հանգամանքները հաշվի առնելով (ծրագրված հանցագործության տեղը, ժամանակը, բնույթը, ծրագրի մշակվածության աստիճանը և այլն)¹³:

Ինչ վերաբերում է հանցագործությունից օժանդակողի կանոսկին հրաժարվելուն, ապա ՀՀ օրենսդիրը որևէ առանձնահատկություն չի նախատեսել: Մինչդեռ մի շարք երկրների քրեական օրենսդրություններում օժանդակողի կանոսկին հրաժարվելու հարցերը առանձնահատուկ լուծում

¹⁰ **Панько К. А.** Добровольный отказ от преступления по советскому уголовному праву. Воронеж, 1975, с. 114.

¹¹ **Տե՛ս Կուզնեցովա Ն. Փ.** Ответственность за приготовление к преступлению и покушение по советскому уголовному праву. М., 1970, էջ 173:

¹² **Տե՛ս Պանկրատով Մ. Վ.** Особенности ответственности соучастников при добровольном отказе и неоконченном преступлении. // "Актуальные проблемы российского права", 2012, № 4, էջ 235-242, **Պիտեցկի Վ.** Добровольный отказ соучастников преступления // "Российская юстиция", 2000, № 10, էջ 38:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 38:

են ստացել: Մասնավորապես, ՌԴ քրեական օրենսգրքի 31 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանցագործության օժանդակողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրենից կախված ամեն ինչ արել է հանցագործությունը կանխելու համար»¹⁴:

Բելառուսի քրեական օրենսգրքի 15 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Օժանդակողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե մինչև կատարողի կողմից հանցանքը ավարտին հասցնելը հրաժարվել է խոստացած աջակցությունը ցուցաբերելուց կամ վերացրել է արդեն ցուցաբերած օժանդակության հետևանքները»¹⁵:

Քրեաիրավական գրականության մեջ հանցագործությունից օժանդակողի կամովին հրաժարվելու հարցը քննարկելիս կարևորվում է այն, թե ինչպես է դրսևորվել օժանդակությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 38 հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներ, ցուցումներ, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»: Փաստացի, ՀՀ օրենսդիրը տարբերակում է ֆիզիկական և ինտելեկտուալ օժանդակությունը:

Ինտելեկտուալ օժանդակության դեպքում, երբ անձն արդեն հանցանքի կատարման խորհուրդներ է տվել կամ տեղեկատվություն տրամադրել, նա այլևս ի գորու չէ վերադարձ կատարելու ելակետային վիճակին, ուստի, կարծում ենք, որ նման դեպքերում կամովին հրաժարում պետք է համարել այն դեպքերը, երբ օժանդակողը իրավասու մարմիններին հայտնելով կամ անձամբ ձեռնարկած միջոցառումներով կանխում է հանցանքի կատարումը: Նման կարծիք են հայտնել նաև Վ. Յու. Շուրինան, Ա. Ի. Օռլովան¹⁶:

Այլ է վիճակն այն դեպքերում, երբ անձը հանցանքի կատարմանը օժանդակել է գործիքներ, միջոցներ տրամադրելով, խոչընդոտները վերացնելով: Նման դեպքերում նա դեռ հնարավորություն ունի վերադարձ կատարելու սկզբնական, ելակետային իրավիճակին՝ հանցակցին տրամադրված գործիքները, միջոցները մինչև հանցանքի կատարումը հետ վերցնելով կամ չեզոքացված խոչընդոտները վերականգնելով: Ա. Ա. Շակիրովայի, Ա. Ա. Կլյուևի կողմից¹⁷ արտահայտվել է այն տեսակետը, որ ֆիզիկական օժանդակություն դրսևորած անձի կամովին հրաժարումը պետք է

¹⁴ "Уголовный кодекс Российской Федерации". М., 2007.

¹⁵ "Уголовный кодекс Республики Беларусь от 24.06.1999 г. ". Обзорная статья А. В. Бркова Минск, 2001.

¹⁶ Տե՛ս **Шубина В. Ю.** К вопросу о совершенствовании законодательного описания института пособничества в совершении преступления. // "Юридический вестник Кубанского государственного университета", 2011, № 4, էջ 28-30, **Орлова А. И.** Добровольный отказ от преступления: проблемы теории и практики. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Красноярск, 2007, էջ 17:

¹⁷ Տե՛ս **Шакирова А. А.**, նշվ. աշխ., **Клюев А. А.**, նշվ. աշխ.:

առկա լինի անկախ նրանից՝ նա իրավասու մարմիններին հաղորդել է կատարվածի մասին, թե ոչ, կատարողը հանցանքն այլ գործիքներով, միջոցներով ավարտին հասցրել է, թե ոչ:

Զժխտելով նման տեսակետի գոյության իրավունքը՝ կարծում ենք, որ առավել հիմնավոր է օժանդակողի կամովին հրաժարման հարցում դրսևորել նույն մոտեցումը, ինչ և կազմակերպիչի ու դրդիչի պատասխանատվության հարցերը քննարկելիս: Բանն այն է, որ ֆիզիկական օժանդակությունը հաճախ նպաստում է կատարողի հանցանք կատարելու վճռականության ամրապնդմանը, նրա կողմից հանցանքի կատարմանը այլ հանցակիցների ներգրավմանը, և նման պարագայում ֆիզիկական օժանդակությունը դրսևորած անձի կողմից իր գործառույթի չեզոքացումը, միևնույնն է, իրադրությունը չի վերադարձնում լրիվ նույն ելակետային վիճակին, որը եղել է մինչ օժանդակություն կատարելը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 36 հոդվածը վերաշարադրել հետևյալ կերպ.

«1. Հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամովին վերջնականապես դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:

2. Հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

3. Հանցագործության համակատարողը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա կողմից հանցանքը կատարելուց կամովին հրաժարվելու դեպքում հանցագործությունն ավարտին չի հասցվում: Եթե հանցագործության համակատարողի կողմից իր արարքը կամովին և վերջնականապես դադարեցնելու դեպքում հանցագործությունը այլ համակատարողների կողմից ավարտին է հասցվում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմիններին ժամանակին հայտնելով՝ փորձել է կանխել հանցակիցների կողմից հանցանքը ավարտին հասցնելը:

4. Հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, իրավասու մարմիններին ժամանակին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով փորձել է կանխել կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը:

5. Եթե սույն հոդվածի չորրորդ մասում նշված արարքները չեն հանգեցրել կատարողի հանցագործությունը կանխելուն իրավասու մարմիններին ժամանակին չտեղեկացնելու պատճառով, ապա ձեռնարկված միջոցները պատիժ նշանակելիս պետք է հաշվի առնվեն որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք»:

Կարծում ենք, որ առաջարկված օրենսդրական փոփոխությունները կարող են նպաստել քրեական օրենսգրքի արդյունավետությանը:

КАМО МОВСИСЯН – Особенности добровольного отказа соучастников от преступления. – Уголовный кодекс РА регламентирует вопросы добровольного отказа от преступления, в том числе добровольного отказа соучастников. Хотя основание и порядок добровольного отказа соучастников определены законодательно, нерешённым остаётся вопрос о применении этого института в отношении соисполнителей. Недостаточно чётко урегулированы также вопросы добровольного отказа пособника, организатора, подстрекателя. В статье анализируется нынешнее регулирование добровольного отказа соучастников от преступления, выявляются недостатки в УК РА и выдвигаются предложения, позволяющие усовершенствовать уголовное законодательство.

KAMO MOVSISYAN – Voluntary Refusal to Commit a Crime by the Accomplices. – The institute of voluntary refusal to commit a crime, including the one with the complicity, is regulated by the Criminal Code of the Republic of Armenia. Though RA Criminal code stipulates grounds and procedure of voluntary refusal to commit a crime by the accomplices, the issue of co-perpetrator's voluntary refusal to commit a crime remains not solved. The issues of abettor's, organizer's, pander's voluntary refusal are also regulated not clearly. The author analyses the current regulation of the discussed institute, reveals shortcomings of RA criminal code in this regard and makes proposals aimed to the improvement of RA criminal legislation.